

**ՀԱՍՏԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԾՐԱԳՐՈՒՄ ԲԵՐՎԱԾ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ**

1. Հիմնական վիճակագրական ցուցանիշների սահմանումները, հաշվարկման մեթոդաբանությունը, չափորոշիչները և այլ համապատասխան տեղեկատվությունները գետեղվում են «Արցախի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական եռամսյակային զեկույցների թողարկումների «Հավելված» հատվածում: Հատվածը մշտապես նորացվում է՝ միջազգային չափանիշներին համապատասխան, ավելացվում են նոր ցուցանիշներ և տրվում դրանց նկարագրություններն ու սահմանումները:

2. Արցախի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայությունը վիճակագրական ցուցանիշների հաշվարկումը իրականացնում է համապատասխան կարգերով և մեթոդաբանական ցուցումներով (մասնավորապես՝ Սպառողական գների ինդեքսի հաշվարկման համար սպառողական ապրանքների գների և ծառայությունների սակագների դիտարկման կարգ, Սպառողական ապրանքների գների և ծառայությունների սակագների դիտարկման և սպառողական գների ինդեքսի հաշվարկման մեթոդաբանական ցուցումներ, Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսի հաշվարկման մեթոդաբանական ցուցումներ, Աշխատանքի, զբաղվածության և աշխատուժի թերօգտագործման վիճակագրության մասին Աշխատանքի վիճակագիրների 19-րդ միջազգային համաժողովի Բանաձև, 2013թ. Ժնև, Աշխատանքի վիճակագիրների 19-րդ միջազգային համաժողովի Բանաձևի ներդրում):

3. Ցուցանիշների հաշվարկման մեթոդաբանական պարզաբանումներն՝ առանձին հատվածների տեսքով գետեղվում են նաև վիճակագրական ժողովածուներում, տեղեկագրերում և այլ վիճակագրական հրապարակումներում:

4. Արժույթի միջազգային հիմնադրամի վիճակագրական վարչությունը տարբեր երկրների վիճակագրական տեղեկատվության որակի, թափանցիկության, տվյալների համադրելիության ապահովման, միջազգային հանրությանը դրանց օգտագործման ավելի լայն հնարավորությունների ընձեռնման, կիրառվող մեթոդաբանության և դրա հետագա զարգացման ծրագրերին տեղեկացնելու նպատակով, հիմնել է Տվյալների տարածման ընդհանուր համակարգ և Տվյալների տարածման հատուկ ստանդարտ:

Թվարկվածներից՝ «Տվյալների տարածման ընդհանուր համակարգին» Հայաստանի Հանրապետությունն անդամագրվել է 2001 թվականի մարտի 29-ին, «Տվյալների տարածման հատուկ ստանդարտին»՝ 2003 թվականի նոյեմբերի 7-ին:

Չգտելով Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության վիճակագրական դաշտերի ներդաշնակեցմանը՝ Արցախի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայությունը վիճակագրական հրապարակումների կառուցվածքը, ցուցանիշների ցանկը և դրանց հաշվարկման մեթոդիկան առավելագույնս համապատասխանեցնում է Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի վիճակագրական հրապարակումների կառուցվածքին, ցուցանիշների ցանկին և դրանց հաշվարկման մեթոդիկային:

5. Արցախի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության ինտերնետային կայքում մշտապես գետեղվում են վիճակագրական հրապարակումները (հայերեն, նախատեսված դեպքերում ռուսերեն, անգլերեն լեզուներով), որոնցում հիմնականում ընդգրկված են վիճակագրական ցուցանիշների սահմանումները և մեթոդաբանական պարզաբանումները:

6. Միջազգային վիճակագրական մեթոդաբանության զարգացման առաջընթացը հասանելի դարձնելու և դրան իրազեկ լինելու նպատակով, Արցախի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայությունը Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեից ստանում և Արցախի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության բաց գրադարանում պահպանում է Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի, ինչպես նաև այլ երկրների վիճակագրական ծառայությունների հրապարակումները: